



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan,
Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.yasu.am

№ 213 « 20 » 12 2021 թ.

Արձանագրություն N 213

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի
2021թ-ի դեկտեմբերի 20-ի նիստի**

Նիստին ներկա էին գիտխորհրդի 25 (քսանութ) անդամներից 22-ը:

- Թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
- Թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
- Դոցենտի կոչման դիմումի քննարկում և մրցույթի անցկացում/զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
- ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Սուրեն Գազիկի Թադևոսյանի փոխարեն քաղաքագիտության բաժնի բակալավրի 4-րդ կուրսի ուսանող Տիգրան Անաստասի Ղլեջյանին Ռուբեն Միրոյանի անվան կրթաթոշակի ներկայացնելու հարցը:
- Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

- Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման.

ա/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Խաչիկ Աբաջյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Ոչ կառավարական կազմակերպությունների դերակատարումը ազգամիջյան թշնամանքի հաղթահարման և խաղաղության մշակույթի ձևավորման համատեքստում», ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական

գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:
Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Մարգարովին:

2. ա/ ՀՀ ՊԱՀՀ-ի ավագ դասախոս, փոխգնդապետ **Ա. Շահվերդյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «**Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը Ղարաբաղյան հակամարտության քաղաքագիտական ռազմավարական գնահատման համատեքստում**», ԻԳ.00.02 – «**Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ**» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Տ. Քոչարյանին:

3. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար ք.գ.թ. Կատերինա Ալթունյանի անունը:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 25 անդամներից քվեարկությանը մասնակցել են 22-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Դոցենտի կոչման համար՝

Կատերինա Ալթունյան – 22 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուբեն Միրոյանի անվան կրթաթոշակառու Սուրեն Գազիկի Թասևոսյանը /Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, Քաղաքագիտության բաժին, Տարածաշրջանային քաղաքականություն մագիստրոսական ծրագիր, երկրորդ կուրս/ 2022թ. հունվարին ավարտում է ուսումնառությունը Երևանի պետական համալսարանում, ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց 2021-2022 ուս. տարվա երկրորդ կիսամյակում Ռուբեն Միրոյանի անվան կրթաթոշակի ներկայացնել ԵՊՀ Միջազգային հարաբերություններ ֆակուլտետի քաղաքագիտության բաժնի բակալավրի չորրորդ կուրս ուսանող Տիգրան Անաստասի Ղլեջյանին:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գ. Պետրոսյան

Գիտական խորհրդի քարտուղար, դոցենտ

Գ. Բալասանյան